

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՎԵՊ ՄԸ ԿՈՄՍՈՒՀԻ
ՔՈՐԻՆԱԼՏԻԻ

Ծնած Վոսպորի ափունքը, հայ ծնողներէ, Կոմսուհի Մարիա Նազլը Քորինալտի համակրելի ծանօթ դէմք մըն է մեր քաղաքին մէջ, իր Կերպորդ հայրենիքը՝ ուր հրատարակած էր մէկ քանի տարի առաջ Փրանսերէն լեզուով երկու հատորներ քերթուածներու: Հիմակ ալ զարգացած տիկինը կ'ընծայէ մեզի վէպ մը «Մալիա մէլ Պոսֆորոյ» տիտղոսով, որ տեսակ մը վերակազմութիւն է պատմական-տեղական կեանքին, Պոլսոյ մէջ, 1800ի վերջերը:

Քորինալտի կոմսուհիին հետաքրքրական հատորը ստուգիւ ճշմարիտ վէպ մը չէ, այլ աւելի կամ պակաս բան մըն է. վաւերացուած մըն է սիրոյ՝ հանդէպ իր երկրին եւ իր ազգին, հին աւանդութիւններուն եւ հրապուրիչ բիւր սովորութիւններուն: Մինչ պատմութիւնը հիւստած է նոյնիսկ չափազանց լայն ուղեգիծով, առանց հոգեբանական խորքի, մակերեսութիւնի նկարագրով անձերու: Հոն կը վարդանք կնոջ մը պատմութիւնը, զեղեցիկ Ֆուլիկին, որ ամուսնանալով հարուստ Տիգրան Պէյի հետ, բարեկեցիկ ու հանդարտ կեանք մը կը վարէ, հարստութիւն ու սէր իր երիտասարդութեան օրերուն, սակայն պէտք է որ կրէ հասուն հասակին՝ իր ամուսնին մահուան եւ քաղաքական դժուարին կացութեան պատճառով, մինչեւ որ ամբողջ ընտանիքը որդէ թողուլ պապենական տունը՝ հաստատուելու համար խաղաղ Սկովտիոյ մէջ: Կիլիզ կարօտ մը սակայն կը զգան մայրն ու երիտասարդ զաւակները, որ միշտ Արեւելք կը նային Կերպորդ աչքերով:

Il Resto del Carlino
30 Յունուար 1958

S. C.



MALIA DEL BOSFORO

(ՎՈՍՓՈՐԻ ԿԱՆԱՐԴԱՆՔԸ) Մարիա Նազլը Քորինալտի:

Հայ ծնողներու զաւակ՝ Մարիա Նազլը Քորինալտի բանաստեղծութեան խորքը հայրենաբաղձութեան զգացում մը եղած է միշտ: Կարօտ մը. սակայն ի՞նչ բանի: Պատասխանը՝ որ իր քերթուածներուն մէջ

լուեկայն ըլլալ կրնար միայն, բացայայտ է Malia del Bosforo իր այս վէպին մէջ՝ որ հրատարակուած է Միլան, եւ անակնկալ պիտի պատճառէ իր ընթերցողներուն:

Ոտանաւոր քերթուածը տեսակ մը բան է, ուսկից ազատիլը դժուարին կը թուի, եւ որուն մէջ ներշնչումը կը փակուի դոյներու բոլոր խառնուրդով՝ իր մտերմութեան մէջ. եւ Կերպորդ ելլել ու իրականութեան աշխարհի մէջ առարկայանալ, եւ փոխադրուիլ Եսի միջնաւանջէն ձերբազատուած դէմքերու՝ մեծ ճիւղ թափելու է:

Այս փորձը ի դուրս դրած է Մարիա Նազլը Քորինալտի իր գրքին մէջ ու յաղթական դուրս ելած է: Սիրային է վէպը: Վոսպորի կարօտը հեղինակին չէ այլեւս, այլ անձի մը՝ Տիգրան Պէյի գեղեցիկ հարսին, չքնաղ Ֆուլիկին, որ կը հաւատայ թէ Վոսպորը կրնայ թողուլ իր ընտանիքին ու սիրոյն համար ու Կերպորդ արեւմուտք (արեւմուտքը հոս Սկովտիան է), ու անոր համակերպիլ: Կիտով չափ միայն կը յաջողի. Վոսպորը իր ողբերգականը կը մնայ:

Սակայն ինչ որ այս գրքին մէջ յատկապէս զմայլելի դուրս եկած ենք, տաղանդաւոր հեղինակին յաղթանակն է, որ յաջողած է տանիլ իր քնարերգականին վրայ: Արեւելքը ոչ թէ մնացած չէ իր դրօշման դադանի դերակատարը, ընդհակառակը՝ դադանի՝ բայց ոչ պահանջկոտ պարագլուխն է. կատարեալ սէր է. եւ ունի կատարեալ սիրոյ առաջին ստորոգելին՝ գիտնալ ինքզինքը մոռնալ:

Երբ Կոմսուհի Քորինալտի կ'առաջնորդէ իր անձերը մարդկային կեանքի փութերու մէջէն, արժէքաւորողը՝ մարդկային իրադարձութիւններն են, եւ ասոնց մէջ ծանրակշիռ դերը մարդոց, իրերու, ժամանակներու, կրքերու փորձառութիւնն է. նկարագրելը չի միջամտեր փոխանակելու կամ պղտորելու հոգեբանական ճշմարտութեան այս մեծ աշխարհը:

Ծնած է կենդանի վէպ մը՝ ուր պահանջկոտ ընթերցողը կրնայ տարուիլ եղբակացներու թէ դուցէ բան մը լուեկայն կրնար հասկցուիլ. բայց երբ մտածենք թէ այս յորդուութեան մէջ կայ խորապէս իրապաշտ ըլլալու պատճառ մը, կը հետեւցնենք թէ զիրքը այլապէս չէր կրնար գրուիլ. գեղեցիկ գիրք մը:

Gazzetta del Veneto

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

“ Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ ”

1957

ԽՄԲԱՐԱԿԱՆ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ	Օրացոյցի 200ամեակին առիթով	Էջ
— — —	Սուղ եւ յարութիւն	1
— — —	Լուռ աշխատանք	52
— — —	Ուխտական կղզին	105
— — —	Հայագիտութիւն	201
— — —		249

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ	Պատմական յիշատակարան մը Դուինի Բ. Ժողովրդի մասին (Շար.)	Էջ
ՄԱՆՈՒԿԵԱՆ Հ. ԱՐԻՍՏԱԿԵՍ	Գէորգ Դպիր Տէր Յովհաննէսեանի ձեռագիրները Ս. Ղազարու Մատենադարանին մէջ	111
ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԵՍ	Օրացոյցին հին էջերէն	166
ՔԻՒՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ	Ողբ մայրաքաղաքին Կաֆայու	6
— — —	Վարդան Վրդ. Այգեկցիի գործերու մէկ ձեռագիրը, 1339էն, Քիւրտեան հաւաքածոյին մէջ	83
— — —	Հառիճոյ վանքին արձանագրութիւնները	122
FEYDIT FREDERIC	Un passage énigmatique de Fauste de Byzance	267
		282

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱԴԱՄԵԱՆ Հ. ԱՐԱՀԱՄ	Եղուակի արար պատմադիրը եւ Հայերը 153, 207, 262	
ՔԻՒՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ	Արմաշի վանքը Երբ հիմնուած է եւ ո՞վ է Թաղէոս Եպիսկոպոս	68

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ	Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին (Շար.)	Էջ
HINDIE Arch. GREGOIRE	Notes liturgiques sur l'office arménien (Suite)	58, 218, 255
		86